

ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵԼԵԿԱԳԻՐ  
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1(25) 2012

ՀՏԴ. 379.85(479.25+479.243)

Տնտեսագիտություն

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ում և ԼՂՀ-ում

Ա.Խ.Սիմոնյան

Զբոսաշրջությունը յուրաքանչյուր պետության տնտեսական գործունեության կարևոր բաղկացուցիչ մաս է, իսկ որոշ երկրներում այն կազմում է տնտեսության հիմնական շարժիչ ուժը և երկրի ներքին արդյունքի գլխավոր մասը:

2006 թվականին զբոսաշրջիկների այցելությունների թիվը կազմել է ավելի քան 846 միլիոն:

Միջազգային այցելությունները ապահովել են ավելի քան 733 միլիարդ ԱՄՆ դոլար եկամուտ, իսկ զբոսաշրջության ոլորտում զբաղվածների թիվը կազմել է ավելի քան 231 միլիոն աշխատող: Այս ցուցանիշները վկայում են, որ զբոսաշրջությունը ամենախոշորն ու ամենամրցունակն է ծառայությունների ոլորտում:

Համաշխարհային զբոսաշրջությունը կազմում է աշխարհի արտահանվող ծառայությունների 35%-ը: Աշխարհի զբոսաշրջային ծառայությունները 2007թ. կազմել են համաշխարհային ՀՆԱ-ի 3,6%-ը (1851,2 միլիարդ ԱՄՆ դոլար): Կանխատեսվում է, որ մինչև 2020 թվականը, համաշխարհային միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը կաճի՝ հասնելով 1.6 մլրդ-ի, իսկ զբոսաշրջային ծախսերի գումարը կկազմի մոտ 2 տրիլիոն ԱՄՆ դոլար, իսկ աշխատողների թիվը՝ 262 միլիոն:

Վերջին 10 տարվա ընթացքում Հայաստանի զբոսաշրջության ոլորտում գրանցվել են զարգացման զգալի տեմպեր: Այնուամենայնիվ համաշխարհային և տարածաշրջանային համատեքստում Հայաստանում զբոսաշրջային արդյունաբերությունը բնութագրվում է միջազգային այցելուների համեմատաբար քիչ քանակությամբ: Հայաստանին են բաժին ընկնում Եվրոպայից զբոսաշրջային այցելությունների 0,08%-ը և համաշխարհային զբոսաշրջային այցելությունների 0,04%-ը: Ինչ վերաբերվում է ներգնա զբոսաշրջությունից ստացված եկամտին, ապա 2006 թվականին այն գնահատվել է 299 մլն. ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի 4,7%-ը) :

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ-ում) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (ԼՂՀ-ում) զբոսաշրջությունը հայտարարվել է տնտեսության գերակա զարգացման ուղղություն: Այդ փաստը ապահովելու համար որպես կարևոր գործընթաց է դիտվում բնագավառի իրավական դաշտի կարգավորումը: Զբոսաշրջության բնագավառի իրավական կարգավորման հիմքը դրվեց 2003թ., երբ ընդունվեց «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Բացի նշված օրենքից հետագայում ընդունվեցին նաև մի շարք ենթաօրենսդրական ակտեր. մասնավորապես այս ակտերը.

- Հայաստանի Հանրապետության կառավարության «Զբոսավարի և ուղեկցորդի գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը» հաստատելու մասին 2004 թվականի հունիսի 10-ի N 945-Ն որոշումը:

- Հայաստանի Հանրապետության կառավարության, հյուրանոցային ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը և որակավորման ընթացակարգը հաստատելու մասին 2004 թվականի հունիսի 10-ի N 946-Ն որոշումը:

- Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի, Հայաստանի Հանրապետությունում զբոսավարի և ուղեկցորդի մասնագիտական որակավորման ստուգման թեստային հարցաշարերում ներառվող հարցերի ցանկը (ընդհանուր հարցաշարը) հաստատելու մասին 2004 թվականի հուլիսի 16-ի N 130-Ն հրամանը:

- Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի, Հայաստանի Հանրապետությունում զբոսավարի և ուղեկցորդի կողմից անվանաքարտ կրելու կարգը հաստատելու մասին 2005 թվականի հոկտեմբերի 17-ի N 212-Ն հրամանը:

Պետք է նկատել, որ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը թե՛ ՀՀ-ում, թե՛ ԼՂՀ-ում նույնն են, որի արդյունքում ՀՀ-ն և ԼՂՀ-ն հնարավորություն են ստանում զբոսաշրջության կազմակերպման գործում գործնականում հանդես գալ որպես միասնական տարածաշրջան:

Նշված իրավական ակտերը նպատակ ունեն համակարգել զբոսաշրջության բնագավառում իրականացվող գործունեությունը, սահմանել որոշակի չափորոշիչներ այդ բնագավառում մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ: Պետության կողմից իրավական գործունեությունը իր հետագա զարգացումը ստացավ 2008թ.-ին, ի դեմս ՀՀ կառավարության կողմից ընդունված «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգին, և «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգից բխող 2008-2012 թվականների միջոցառումների ծրագրին, որնցում կատարված են զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին միջազգային զարգացումների վերլուծությունը, ինչպես նաև նախանշված ՀՀ-ում բնագավառի զարգացման տենդենցները և հետագա քայլերը, որոնք կապահովեն բնագավառի զարգացումը:

Օրենսդրության հետագա կատարելագործումը ընթացավ 2010 թ.-ին, երբ ընդունվեցին փոփոխություններ Լիցենզավորման մասին, «Զբոսաշրջության և զբոսաշրջության գործունեության մասին», Պետական տուրքի մասին ՀՀ օրենքներում, որոնց արդյունքում բնագավառում գործունեությունը առավել ազատականացվեց: 2011 թվականի հունվարի 1-ից հանվեցին զբոսավարի և ուղեկցորդի գործունեության լիցենզավորման պահանջները:

Միաժամանակ դադարեցվել է նաև բնագավառում լիցենզավորված զբոսավարների և ուղեկցորդների համար ՀՀ պետական տուրքի վճարումը:

Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը՝ զբոսաշրջության և տարածքային տնտեսական զարգացման վարչության միջոցով, իսկ ԼՂՀ-ում կառավարությանն առնթր զբոսաշրջության վարչության միջոցով:

Զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության նպատակները սահմանված են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» օրենքով և 2008 թվականի փետրվարի 13-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած զբոսաշրջության զարգացման հայեցակարգով:

Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության նպատակներն են.

- 1) մեծացնել զբոսաշրջության ներդրումը ազգային եկամտի ավելացման մեջ,
- 2) ապահովել համաշափ տարածքային զարգացումը,
- 3) նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման:

Նախանշված նպատակները կարող են հասանելի դառնալ, եթե գործուն միջոցառումներ ձեռնարկվեն հետևյալ գործընթացների ապահովման ուղղությամբ.

- 1) զբոսաշրջային այցելությունների քանակի աճ,
- 2) զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացում,
- 3) նոր աշխատատեղերի ստեղծում:

Հայաստանում զբոսաշրջության զարգացման տեմպերը և արդյունքները ուսումնասիրելու և վերը նշված նպատակներին հասնելու հնարավորությունները գնահատելու համար խիստ կարևոր է վերլուծել վերջին տարիներին բնագավառում արձանագրված վիճակագրական ցուցանիշները: ՀՀ-ում և ԼՂՀ-ում բնագավառի գնահատման համար առավել էական նշանակություն ունեցող ցուցանիշների ցանկը և դրանց փոփոխման դինամիկան բերված են աղյուսակ 1-ում [2,3]:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից՝ բնակչությանը մատուցվող ծառայությունների ընդհանուր ծավալները արտահայտված մլն. դրամով, ամեն տարի անընդհատ աճել է. տարեկան 5,1-37,4%-ով՝ ապահովելով տարեկան միջին աճ՝ 22,6%: Փոփոխությունների այս դինամիկան խոսում է այն մասին, որ ծառայությունների ծավալները և տեսակները, որոնք դիտարկվող ժամանակահատվածում մատուցվել են բնակչությանը, անընդհատ աճել են, սակայն տարբեր տարիների դրանց դինամիկան կրել է խիստ փոփոխական բնույթ: Հյուրանոցների և ռեստորանների շրջանառության ծավալները՝ արտահայտված դրամական համակարգով, դիտարկվող ժամանակահատվածում նույնպես անընդհատ աճել են տարեկան (12-23)%-ով՝ ապահովելով միջին տարեկան 18,2% աճ: Զբոսաշրջային կազմակերպությունների շրջանառության ծավալների տարեկան միջին աճը կազմել է 12,6%, սակայն այդ ընթացքում ցուցանիշն ունեցել է ինչպես աճ՝ առավելագույնը 48% (2008 թվական), այնպես էլ նվազում՝ առավելագույնը մինչև 7% (2009 թվական): Ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ մոտոք գործող զբոսաշրջիկների թիվը յուրաքանչյուր տարի աճել է, և միջին տարեկան աճը կազմել է 18,5%: Սակայն պետք է նկատել, որ այդ անընդհատ աճը նույնպես կրել է խիստ անհավասարաչափ բնույթ՝ փոփոխվելով 3%-ից (2009 թվական) մինչև 33% (2007 թվական): Միայն զբոսաշրջային կազմակերպությունների շրջանառության ծավալները կազմել են երկրում մատուցվող ծառայությունների ընդհանուր ծավալների (0,26-0,5)%-ը: Հյուրանոցային և ռեստորանային ծառայությունների և զբոսաշրջության կազմակերպությունների միասնական շրջանառության ծավալները կազմել են ընդհանուր ծառայությունների ծավալի (4,2-5,6)%-ը:

Եթե վերլուծելու լինենք մեկ բնակչին ընկնող ցուցանիշները, ապա կնկատենք, որ.

-ծառայությունների ընդհանուր ծավալները աճել են (4,8-37,2)%, իսկ միջին տարեկան աճը կազմել է՝ 22,4%,

- հյուրանոցների և ռեստորանների շրջանառության ծավալները աճել են (11,8-23)%՝ ապահովելով տարեկան միջինը 18% աճ,

- զբոսաշրջային կազմակերպությունների շրջանառության ծավալների փոփոխությունը ունեցել է ինչպես աճի՝ առավելագույնը 48% (2008 թվական), այնպես էլ նվազման միտումներ՝ 7,4% (2009 թվական), իսկ միջին տարեկան աճը կազմել է 12,4%:

ԼՂՀ-ում նմանատիպ ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ մատուցվող ծառայությունների ընդհանուր ծավալները դիտարկվող ժամանակահատվածում նույնպես անընդհատ աճել են տարեկան (18,5-38,5)%-ով՝ ապահովելով տարեկան միջինը՝ 29% աճ: Պետք է նկատել, որ ԼՂՀ ազգային վիճակագրության ծառայության կողմից հյուրանոցների և ռեստորանների, ինչպես նաև զբոսաշրջային կազմակերպությունների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունները սկսել են հավաքագրվել և հաշվառվել սկսած 2008 թվականից, ինչը հնարավորություն չի տալիս այդ ցուցանիշների փոփոխությունը վերլուծել: ԼՂՀ-ում մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալը նույնպես ունեցել է աճի միտում՝ կազմելով (17,6-34,8)%, իսկ տարեկան միջին աճը կազմել է 25,5%:

Բնակչության տեղաշարժի ցուցանիշները ցույց են տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում մշտապես գրանցվել է միգրացիայի մնացորդի բացասական ցուցանիշ: ԼՂՀ-ում այս տեսանկյունից եղել են ինչպես դրական այնպես էլ բացասական ցուցանիշներ:

Զբոսաշրջության բնագավառի ցուցանիշները և փոփոխման դինամիկան ՀՀ-ում և ԼՂՀ-ում.

Աղյուսակ 1

| Հ/Հ | Ցուցանիշը                                                       | 2003     | 2004     | 2005     | 2006     | 2007     | 2008     | 2009     |
|-----|-----------------------------------------------------------------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|
| 1.  | Ծառայությունների ընդհանուր ծավալներ, մլն. դրամ                  | 230351.5 | 287698.8 | 362819.3 | 498468.7 | 599435.6 | 732002.6 | 769267.1 |
| 2.  | Հյուրանոցային և ռեստորանային շրջանառության ծավալները, մլն. դրամ | 11890.7  | 14504.3  | 17866    | 20442.5  | 23712.2  | 28808.8  | 32321.2  |
| 3.  | Զբոսաշրջային կազմակերպությունների                               | 1164     | 1102.7   | 1310.1   | 1277.6   | 1580.8   | 2344.8   | 2176.8   |

|                                                   |                                                                                           |             |             |             |             |             |             |             |
|---------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|
|                                                   | շրջանառության<br>ծավալները,<br>մլն. դրամ                                                  |             |             |             |             |             |             |             |
| 4.                                                | Երկիր մուտք<br>գործած զբոսա-<br>շրջիկների թիվը,<br>հազ. դրամ                              | 206094      | 262685      | 318563      | 381136      | 510287      | 558443      | 575281      |
| <b>Ծառայությունների ծախսերը մեկ բնակչի հաշվով</b> |                                                                                           |             |             |             |             |             |             |             |
| 5.                                                | Ծառայությունների<br>ընդհանուր<br>ծախսերի<br>ծավալներ, մլն.<br>դրամ                        | 71731.5     | 89514.3     | 112764.4    | 154751.1    | 185785.1    | 226345.9    | 237157.3    |
| 6.                                                | Նյութանոցային և<br>ռեստորանային<br>շրջանառության<br>ծավալները,<br>մլն. դրամ               | 3702.8      | 4512.9      | 5552.8      | 6346.4      | 7349.2      | 8908.1      | 9964.3      |
| 7.                                                | Զբոսաշրջային<br>կազմակերպու-<br>թյունների շրջանա-<br>ռության ծավալ-<br>ները, մլն. դրամ    | 362.5       | 343.1       | 407.2       | 396.6       | 489.9       | 725.1       | 671.1       |
| <b>Բնակչության տեղաշարժի ցուցանիշներ</b>          |                                                                                           |             |             |             |             |             |             |             |
| <b>Հ/Հ</b>                                        | <b>Ցուցանիշը</b>                                                                          | <b>2003</b> | <b>2004</b> | <b>2005</b> | <b>2006</b> | <b>2007</b> | <b>2008</b> | <b>2009</b> |
| 8.                                                | Երկրից<br>մեկնողների թիվը,<br>հազ. մարդ                                                   | 628.5       | 737.8       | 833.3       | 962         | 1296.8      | 1420.2      | 1457        |
| 9.                                                | Երկիր<br>ժամանողների<br>թիվը, հազ. մարդ                                                   | 618.3       | 739.9       | 845.8       | 983.7       | 1293.6      | 1397.1      | 1432        |
| 10.                                               | Ժամանողների և<br>մեկնողների<br>տարբերություն,<br>հազ. մարդ                                | -10.2       | 2.1         | 12.5        | 21.7        | -3.2        | -23.1       | -25         |
| 11.                                               | Բնակչության<br>միգրացիայի մնա-<br>ցորդը, հազ. մարդ                                        | -7.6        | -7.7        | -7.8        | -6.7        | -6.4        | -5.8        | -3.9        |
| <b>ԼՂՀ-ում համանման ցուցանիշները</b>              |                                                                                           |             |             |             |             |             |             |             |
| 12.                                               | Ծառայությունների<br>ընդհանուր շրջա-<br>նառության ծա-<br>վալներ, մլն.դրամ                  | 3164.6      | 4382.3      | 5430        | 7010.3      | 8311.6      | 11291.5     | 14481.6     |
| 13.                                               | Ծառայությունների<br>ընդհանուր<br>շրջանառության<br>ծավալները մեկ<br>բնակչի հաշվով,<br>դրամ | 26383.9     | 26383.9     | 39433.6     | 50892.6     | 59867       | 80711.9     | 102415.8    |
| 14.                                               | Երկրից մեկնող-<br>ների թիվը, մարդ                                                         | 692         | 1657        | 721         | 1310        | 1026        | 775         | 403         |
| 15.                                               | Երկիր ժամանող-<br>ների թիվը, մարդ                                                         | 872         | 1295        | 956         | 865         | 831         | 1142        | 914         |
| 16.                                               | Ժամանողների և<br>մեկնողների<br>տարբերություն<br>(բնակչության<br>միգրացիայի)               | 180         | -362        | 235         | -445        | -195        | 367         | 511         |

|  |                |  |  |  |  |  |  |  |
|--|----------------|--|--|--|--|--|--|--|
|  | մնացորդը) մարդ |  |  |  |  |  |  |  |
|--|----------------|--|--|--|--|--|--|--|

Այս վերլուծությունների արդյունքում հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Զբոսաշրջությունը և զբոսաշրջային գործունեությունը՝ որպես ՀՀ և ԼՂՀ տնտեսությունների ինքնուրույն բաղադրիչներ, դեռևս մեծ տեսակարար կշիռ չեն կազմում, քանի որ ծառայությունների մատուցման ընդհանուր ծավալում ոլորտի տեսակարար կշիռը չի անցնում 5%-ը:

2. Զբոսաշրջությունը և զբոսաշրջային գործունեությունը, որպես տնտեսության ինքնուրույն ոլորտ, խիստ զգայուն է արտաքին ազդակների նկատմամբ, ինչով և բացատրվում է առաջին հայացքից հակասական թվացող այն հանգամանքը, որ ծառայությունների ընդհանուր ծավալի, հյուրանոցային և ռեստորանային ծառայությունների և զբոսաշրջիկների թվի անընդհատ աճի պայմաններում զբոսաշրջային կազմակերպությունների շրջանառությունը ունեցել է աճի ցածր տեմպեր, իսկ որոշ տարիների նույնիսկ ցուցաբերել նվազման միտումներ նախորդ տարվա համեմատ: Այս ցուցանիշը ըստ էության փոփոխվել է այսպես կոչված սինուսոիդալ օրենքով: Յուրաքանչյուր տարվա որոշակի աճի որպես կանոն հաջորդել է նվազում: Այս փաստը կարող է բացատրվել միայն տարաբնույթ, այսպես կոչված չնկատվող և դժվար հաշվառվող գործոններով, ինչպիսիք են՝ ոչ բավարար և արդյունավետ գովազդը, քաղաքական իրավիճակի փոփոխությունը, զբոսաշրջային գրավչության նվազումը և այլն: Պետք է նկատել, որ այս իրավիճակի վրա էականորեն ազդել է նաև համաշխարհային ճգնաժամը, քանի որ բացասական ցուցանիշները առավել հաճախ գրանցվել են հենց 2009 թվականին:

3. Ոլորտի մեկ այլ ցուցանիշի՝ մեկ բնակչին ընկնող ծախսերի տեսանկյունից, զբոսաշրջային կազմակերպությունների ծախսերի փոփոխությունը նույնպես կրել է սինուսոիդալ բնույթ, չնայած այն հանգամանքին, որ տարեկան միգրացիայի մնացորդը միշտ եղել է բացասական, այսինքն բնակչության ընդհանուր թվակազմում զբոսաշրջային ծառայությունների կարիք ունեցող քաղաքացիների թիվը ունեցել է անընդհատ նվազման միտում: Այստեղ նկատվում է միգրացիայի մնացորդի բացասական արժեքի երկակի ազդեցության բնույթը: Ինչպես արդեն ասվեց բացասական միգրացիան պետք է ավելացներ մեկ բնակչի հաշվով ծախսերը, սակայն բացասական միգրացիան միաժամանակ նվազեցնում է զբոսաշրջային ծառայություններից օգտվելու կարողություն ունեցող քաղաքացիների թիվը, այսինքն նվազեցնում է ոլորտի պոտենցիալ եկամուտների և շրջանառության ծավալները: Նշված երկրորդ գործընդունել է ավելի ազդեցիկ, ինչը պայմանավորված է նրանով, որ երկրից մշտապես մեկնողները, որպես կանոն չափահաս, որոշակի ֆինանսական ռեսուրսներ ունեցող քաղաքացիներ են, որոնք երկրում մնալու դեպքում կարող էին դառնալ զբոսաշրջության ոլորտի շահառուներ (ոլորտի ծառայություններից օգտվողներ):

Հաշվի առնելով, որ ոլորտը հայտարարվել է գերակա ուղղություն և խիստ կարևոր է ոլորտի հետագա կայուն և արդյունավետ զարգացման ապահովումը, անհրաժեշտ են մի շարք բարեփոխումներ՝ ինչպես տնտեսվարման կազմակերպման, այնպես էլ օրենսդրական դաշտում:

Հաշվի առնելով կատարված վերլուծությունները՝ ոլորտի հետագա բարելավման համար, առաջարկվում են.

1. Վերանայել ոլորտի վերաբերյալ վիճակագրության հավաքագրման մեթոդներ: Վիճակագրության հավաքագրումը նպատակահարմար կլինի կատարել ըստ զբոսաշրջային գործունեության որոշակի տեսակների և առաջարկվող ծառայությունների: Վիճակագրության նման հավաքագրումը, թույլ կտա հասկանալու առավել մեծ պահանջարկ ունեցող և առավել արդյունավետ զարգացող զբոսաշրջության ուղղությունները (օրինակ՝ պատմա-մշակույթային, առողջարանային և այլն) և դրա հենքի վրա համապատասխան ներդրումների հաշվին ապահովել առաջարկվող ծառայությունների որակի հետագա բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:

2. Ներգնա և ներքին զբոսաշրջության զարգացման համար կիրառել միջոցառումներ (ներկարաժամկետ վարկեր, հարկային արտոնություններ, փոխհատուցումներ և այլն), որոնց արդյունքում ներքին տարածքում մատուցվող զբոսաշրջային ծառայությունների գները կնվազեն և այդ ծառայությունները մրցունակ կլինեն տարածաշրջանային այլ ներկրներում (Վրաստան, Թուրքիա և այլն) մատուցվող նմանատիպ ծառայությունների հետ: Այս հիմնախնդիրը առավել կարևորվում է, եթե հաշվի առնենք բնակչության ցածր կենսամակարդակը՝ աղքատության մակարդակը նշված ժամանակահատվածում ՀՀ-ում կազմել է (18-28)%, որից ծայրահեղ աղքատները կազմել են (8-14)% [4]:

3. Իրականացնել օրենսդրության հետագա կատարելագործում և ներդնել ծառայությունների որակի մոնիթորինգի և գնահատման համակարգ, որը կդառնա պետության և հանրության կողմից ոլորտում իրականացվող վերահսկողության կարևոր գործիք: Այս տեսանկյունից դրական է այն փաստը, որ հյուրանոցների և հյուրանոցային տնտեսությունների համար հաստատվել է այդ օբյեկտների որակավորման կարգը և համապատասխան չափորոշիչները (սահմանված է մեկից հինգ աստղանի համակարգով որակավորում): Սակայն ներկայումս ՀՀ-ում նման որակավորման գործընթաց անցել են ընդամենը 27 հաստատություն (նմանատիպ հաստատությունների 1%-ից պակաս): Ինչ վերաբերում է այն բանին, որ հանրությունը հնարավորություն ունենա վերահսկելու և միաժամանակ հավաստելու այդ կազմակերպություններում մատուցվող ծառայությունների որակը, ապա նման մեխանիզմներ ընդհանրապես բացակայում են: Այդ մեխանիզմների առկայությունը կարևոր խթան կարող էր դառնալ ծառայությունների որակի բարձրացման և միաժամանակ իրենց կազմակերպությունների գովազդի զարգացման համար:

### *Գրականություն*

1. «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ», Երևան, 2008:  
<http://www.mineconomy.am/file/pdfs/CONCEPTFinal.pdf>
2. <http://www.armstat.am>, Ազգային վիճակագրության ծառայության հրատարակումները բաժին:
3. <http://www.nkr-stat.am>, ԼՂՀ ազգային վիճակագրության ծառայության հրատարակումներ բաժին:
4. Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ: Երևան, 2010:
5. Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ՀՀ օրենք:  
<http://www.parliament.am>:
6. Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ԼՂՀ օրենք (ՀՕ-147, ընդունված 2004 թվականի նոյեմբերի 24-ին):
7. [www.karabakh.travel.am](http://www.karabakh.travel.am):

Анализ состояния туризма и туристической деятельности в республике Армения и НКР.

**А.Х.Симонян**

*Резюме*

В статье анализируется состояние туристической деятельности, рассматриваются основополагающие концепции развития туризма РА и НКР, динамика изменения международного и внутреннего туризма, роль и место туризма в экономике республики, основы организации туристической деятельности, социальный статус туризма и туризм - как сфера деятельности.

Даются рекомендации, которые способствовали бы улучшению состояния туристической деятельности, могли бы стать основой для разработки государственной политики развития туризма РА и НКР.

Analysis of Tourism Activity in RA and NKR.

The article analyzes the state of tourism activity, considers the fundamental trends of tourism development in RA and NKR, as well as dwells on the dynamics of the changes within international and domestic tourism. It also discusses the place of tourism in the economy of the republic, the basis of tourism in the economy of the social status of tourism.

Some recommendations are offered on the enhancement of the tourism activity, which may underlie the state policy of tourism development in RA and NKR.

ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1(25) 2012

ՀՏԴ 378.147:809. 198. 1

Հայոց լեզվի մեթոդիկա, բուհական

ԴԵՐԱՆՎԱՆ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՀՈՒՄ

Ս.Ա.Մինասյան

Դերանունը՝ որպես առանձին խոսքի մաս, ունենալով յուրահատուկ քերականական հատկանիշներ, ինչպես հայտնի է, արեղյանական շրջանում լուծարվել ու բաշխվել է հարաբերակից խոսքի մասերի՝ գոյականի, ածականի, թվականի, մակբայի հարթություններում (1. 2): Մ. Արեղյանի կողմից գոյականի ու դերանվան թվի քերականական կարգի կանոնը տրվում է մեկտեղված՝ «...գոյականի գաղափարի պատկերացումը իբրև մեկ կամ շատ» (1, 335. 2, 271), իսկ հոգնակի թվի կազմությունը գոյականի հոլովի հետ է մեկտեղում (բոլորն էլ այդ կարգերը հարաբերության շարքում են քննարկում ընդհանրապես՝ ելնելով այդ խոսքի մասի ձևաբանական շարային առանձնահատկությունից, առավել ևս իմաստաբանական ծանրաբեռնվածության հստակ պարզաբանումների համար, որը Էդ Աղայանը շարակարգայինով է (7, 70) առանձին-առանձին ներկայացնում (ն. տ., 263-272):

XX դ. կեսին Ս. Աբրահամյանի կողմից նոր հայեցակետով հիմնավորվելով՝ դերանունն առանձին խոսքի մաս է ճանաչվել (3): Արդի ժամանակահատվածում կարծես փորձ է կատարվում նորից լուծարելու այն: Մ. Ասատրյանն իր ժամանակին նշել է. «...արդի քերականական համակարգով ներկայացված դերանունները քերականական միասնական խումբ չեն կազմում: Բայց դրա հետ միասին անժխտելի է նաև այն, որ դերանվան մեջ մտցվող առանձին բառախմբեր իրենց յուրահատուկ քերականական հատկանիշներով տարբերվում են բառերի մյուս բոլոր խմբերից: Դրանք են հատկապես անձնական, փոխադարձ, ցուցական և հարցական-հարաբերական դերանունները: Ըստ երևույթին, հենց այդ բառերն էլ կազմում են ժամանակակից հայերենի *խկական* դերանունները» (11, 167):

Դերանվան՝ որպես քերականական յուրահատուկություններ ունեցող խոսքի մասի, ուսուցման գործընթացում շատ դժվարություններ են հաղթահարվում տնականների ու քերականական կարգերի մանրամասնման բնագավառում (հատկապես բակլավիթիատի, մագիստրատուրայի բաժիններում՝ կրտսեր, միջին և ավագ դասարանների համար մասնագետ պատրաստելիս): Դերանվան հոլովման քերականական կարգին, նմանապես թվի կարգին պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել, որովհետև լինելով ամենօրյա գործուն բառերի թեքված ձևեր՝ մասնագետները պարտավոր են գիտականորեն համաժամանակյա ու տարածամասնակյա մոտեցումներով խոր իմանալ, դժվարահարույց հարցերը հիմնավորապես մեկնաբանել՝ օգտագործելով համադրման, հակադրման, որոնողական մեթոդները, հաճախակի կիրառելով ուղղորդող հարցեր: Ի հակադրություն դպրոցական մակարդակի, բուհի մատչելիությունը չպետք է շրջանցի «անհասկանալի, անմեկնելի թվացող